ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1/94-20Դ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» հոկտեմբերի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ռուզան Ասատրյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Բագրատ Սարգսյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշումը (այսուհետ՝ Որոշում), ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի աղյուսակ N 7.1-ի «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման ««Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղության իրականացման համար նախատեսված ֆինանսական ծավալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի N 1022-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 4-ին կայացած N 3 նիստի արձանագրությունը՝ Կատարողի կողմից Երվանդ Թերզյանի անվան Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի ծրագրի շրջանակներում կազմակերպված մրցույթի արդյունքում շահած գիտական թեմաներից մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականների 6 (վեց) գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմաներ) ֆինանսավորման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Թեմաների ֆինանսավորման նպատակով Կատարողին հատկացնել 30,000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար՝ Թեմաներից յուրաքանչյուրի համար նախատեսելով 5 000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ Կատարողը պարտավորվում է Թեմաների ֆինանսավորումն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Թեմաները տրվելու են Գիտական և գիտատեխնիկական գործունեության հետևյալ 4 (չորս) բնագավառներում, յուրաքանչյուրից առնվազն 1 (մեկ) հատ՝

Բնական գիտություններ (Natural Sciences),
Ֆիզիկական գիտություններ (Physical Sciences),
Ճարտարագիտություն (Engeneering),
Հումանիտար և հասարակական գիտություններ (Humanities & Social Sciences):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կատարողից պահանջել կատարելու Պայմանագրի **2.4.** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Թեմաների արդյունքները:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Մինչև գումարն իրեն փոխանցելը հրաժարվել դրանից (գրավոր),

2.2.2 Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրի **1.1** կետով սահմանված գումարն ամբողջությամբ 2020 թվականի ընթացքում Կատարողին հանձնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափաքանակներով, փոխանցման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքին համապատասխան,

2.3.2 Պայմանագրի **2.3.1** կետով սահմանված կարգով գումարները Կատարողին հանձնել նրա հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով,

2.3.3 Թեմաների իրականացման մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով,

2.4.2 իրականացնել Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ ՀՀ հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.3 Կոմիտե ներկայացնել Թեմաների իրականացման մասին ֆինանսական հաշվետվություններ՝ ծրագրի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում,

2.4.4 Ապահովել Թեմաների իրականացման արդյունքները ներկայացնող գիտական բոլոր հրապարակումներում՝ ներառյալ զեկույցների թեզիսները, հեղինակների կողմից Թեմայի վրա հղում կատարելը՝ նշելով դրա ծածկագիրը:

3.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը

կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

4.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

4.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե՝	**Կատարող՝**
ՀՀ գիտության կոմիտե	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22	Ք. Երևան Մ. Խորենացու 22
Հ/հ 900011033066	Հ/հ 217 001-287374-001
ՀՎՀՀ 02704199	Էյչ Էս Բի սի բանկ Հայաստան
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 02517115
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ՌՈՒԶԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ	**ԲԱԳՐԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ**
Կ. Տ.	Կ. Տ.